

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԴՄՕ5

ք. Երևան

« 26 » « հունվարի » 2024թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ՝ Վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Արմենակ Խաչատրյանի (այսուհետ՝ Աշխատակազմ), որը գործում է Աշխատակազմի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Կառավարական առանձնատների տնտեսություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը՝ ի դեմս տնօրենի լիազորությունները կատարող Էմիլ Մանուկյանի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա մյուս կողմից, (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2323-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում)՝ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 01 բաժնի, 03 խմբի, 03 դասի «1136. ՀՀ Վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում» ծրագրի «11010. ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց գերատեսչական առանձնատների և տարածքների շահագործում և սպասարկում» միջոցառման (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1. Սույն Պայմանագրով Աշխատակազմը պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Որոշմամբ նախատեսված տարեկան կտրվածքով՝ մինչև 602 979 000 (վեց հարյուր երկու միլիոն ինը հարյուր յոթանասունինը հազար) ՀՀ դրամ դրամաշնորհի գումար (ներառյալ ավելացված արժեքի հարկը), որից 597 554 000 (հինգ հարյուր ինսունյոթ միլիոն հինգ հարյուր հիսունչորս) ՀՀ դրամը բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4637 «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով, 5 425 000 (հինգ միլիոն չորս հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամը բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4655 «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով, Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով հաստատված տարեկան հատկացումների եռամսյակային (աճողական) բաշխվածությանը համապատասխան՝ ամսական համամասնություններով՝ համաձայն Հավելված N3-ի, իսկ Կազմակերպությունը

պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և սույն Պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ Միջոցառումներ) ներկայացված են սույն Պայմանագրի Հավելված N 1-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Աշխատակազմն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. Որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. Առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. Իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. Սույն Պայմանագիրը ՀՀ օրենսդրությամբ կամ սույն Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.1.5 Կազմակերպությունից պահանջել ներկայացնելու Ծրագրի կատարման վերաբերյալ եռամսյակային հաշվետվություններ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը և տարեկան ամփոփ հաշվետվություն՝ մինչև հաջորդող տարվա փետրվարի 01-ը, ինչպես նաև հաշվետվություն դրամաշնորհի նկատմամբ հաշվարկված ավելացված արժեքի հարկի հաշվարկման և վճարման վերաբերյալ՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը:

Ներկայացվող հաշվետվությունների համար ուղեցույց են հանդիսանում ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի N254-Ն հրամանով հաստատված Հ-2, Հ-8 ձևերը:

